



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

25 հուլիսի 2012 թվականի N

ՀՀ Կառավարության և Վարչապետի վերջին տարիների որոշումներից բխում էր, որ Երևանի ֆիզիկայի ինստիտուտի զարգացման գործընթացը պետք է շարունակվի նոր կարգավիճակով և կառուցվածքային հիմքով: Ինստիտուտի գիտական արդյունավետության բարձրացման միջոցառումները և կառավարման ծրագրավորվող բարեփոխումները նպատակ ունեն այն դարձնելու օրինակելի մոդել Հայաստանում գիտության մյուս բնագավառները ներկայացնող գիտական կենտրոնների ձևավորման և գիտական գործունեության բարեփոխման համար:

Հաշվի առնելով այդ բոլորը Ա.Բ.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) հոգաբարձուների խորհրդի նախագահ Ն. Երիցյանին հանձնարարում եմ՝

1. Մինչև Ա.Բ.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայում գործող գիտական խորհրդի կազմի հաջորդ ընտրությունները ուսումնասիրության և քննարկման առարկա դարձնել և դրա արդյունքում կանոնակարգել արտասահմանյան մասնագետներից կազմված և ինստիտուտում գործող գիտական խորհուրդների գործունեության ոլորտը՝ հաշվի առնելով ժամանակակից լավագույն փորձը և գիտնականների առաջարկները այդ ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

S. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. հուլիսի 25
Երևան

